# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ԱԷՄՋԻ ՍՊԸ-ն ՅԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/64 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | |
|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 7 | Պերեկիս պարունակող ախտահանիչ | Չինաստան<br>Հնդկաստան<br>Ռուսաստան<br>Ուկրաինա<br>Բելառուսիա<br>Եվրոպա | Ախտահանիչ նյութը իրենից ներկայացնում է թափանցիկ կամ թույլ օպալեսցենտող, յուրահատուկ հոտով համասեռ հեղուկ խտանյութ: Որպես ազդող նյութեր միջոցը պարունակում է. ջրածնի պերօքսիդ (ՋՊ)՝ 50% և արծաթ՝ 500 մգ/լ, ՉԱՄ-երի և գուանիդինի խմբերին պատկանող ազդող նյութեր, ինչպես նաև մաքրված ջուր և ֆունկցիոնալ բաղադրիչներ, ներառյալ ոչ իոնոգեն մակերեսային ակտիվ նյութեր և կոռոզիայի ինհիբիտոր: Միջոցի pH-ը՝ 5,0 միավոր է: Միջոցի խտանյութի պիտանելիության ժամկետը ոչ պակաս, քան 1 տարի: Միջոցը պետք է օժտված լինի հակամանրէային ակտիվությամբ, այդ թվում մանրէասպան հատկություններով գրամբացասական և գրամդրական մանրէների նկատմամբ (ներառյալ տուբերկուլոզի՝ թեստավորված Mycobacterium terrae շտամի վրա), բժշկական միջամտությամբ պայմանավորված վարակների՝ թեստավորված Պ. Աերուգինոսայի (P.aeruginosa) վրա, անաէրոբ վարակների՝ թեստավորված Կ. Դիֆիսիլեի (C.difficile) վրա, հատուկ վտանգավոր և կարանտինային վարակների (ժանտախտ, խոլերա, |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | տուլարեմիա, սիբիրյան խոց), լեգիոնելոզի հարուցիչների), վիրուսասպան ակտիվությամբ` մարդու բոլոր հայտնի ախտածին վիրուսների նկատմամբ (այդ թվում ընդերային, արտաընդերային հեպատիտներ Ա-ի, Բ-ի, Ց-ի, ՄԻԱՎ-վարակի, պոլիոմիելիտի հարուցիչների, Կոքսակի էնտերովիրուսների, ECHO, ռոտավիրուսների, նորովիրուսների, կորոնավիրուսների, «ատիպիկ թոքաբորբի» (SARS), հերպեսի, H5N1 «թռչնի» գրիպի, H1N1 «խոզի» գրիպի, մարդու գրիպի, պարագրիպի վիրուսների, ադենովիրուսների և այլն), սնկասպան ակտիվությամբ (այդ թվում Կանդիդա ցեղի ախտածին սնկերի, դերմատոֆիտների, բորբոսասնկերի նկատմամբ), սպորասպան ակտիվությամբ, օվոցիդ հատկություններով` էնտերոբիոզի հարուցիչների նկատմամբ: Պատրաստուկի հատկությունները թույլ են տալիս համակցել մեկ գործողության մեջ մշակվող մակերեսների և օբյեկտների լվացումը, ախտահանումը և դեզոդորացումը: Միջոցը նախատեսված է կանխարգելիչ, ընթացիկ և եզրափակիչ ախտահանման, մանրէազերծման, հիմնական մաքրում իրականացնելու, մակերեսների և օբյեկտների դեզինվազիայի և հելմինթազերծման համար: Միջոցը նախատեսված է մակերեսների (հատակ, պատեր, դռներ և այլն), կոշտ գույքի, այդ թվում բարուրասեղանների, կուվեզների, դրանց մասերի և հարմարանքների ախտահանման համար, կոռոզիակայուն նյութերից բժշկական նշանակության արտադրատեսակների (ներառյալ վիրաբուժական և ատամնաբուժական գործիքները, կոշտ և ճկուն էնդոսկոպները, դրանց կից գործիքները) նախամանրէազերծման մաքրման, ախտահանման և մանրէազերծման համար` ձեռքային եղանակով: Վտանգավորության աստիճանը` 3 - 4-րդ դաս: Պետք է ունենա ՀՀ ԱՆ կողմից հաստատված կիրառման մեթոդական հրահանգ: Մատակարարվող յուրաքանչյուր խմբաքանակի համար պետք է ներկայացվի որակի սերտիֆիկատ, մատակարարման պահին ապրանքի պիտանիության ժամկետի առնվազն 2/3-ի առկայություն: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО АЕМДЖИ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՅԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/64 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | |
|---|---|---|---|
| | фирменное наименование | наименование производителя | технические характеристики |
| 7 | | | |